

3. Սպասվող զիջումներ և վտանգ ազգային ինքնագիտակցության համար

Ա. Ա. ՆԱԼԶԱԶՅԱՆ

Արցախի խնդրի շուրջ վերսկսվող բանակցութիւնների մասին տեղեկութիւնները բավականին տազնապալից են: Ըստ զանգվածային տեղեկատվութիւն միջոցների հաղորդումների, հայկական կողմը պատրաստ է բավականին վտանգավոր տարածքային զիջումներ կատարել՝ զորքերը դուրս բերել ազատագրված տարածքներից և դրանք զիջել Ադրբեյջանին՝ այդ երկրի «տարածքային ամբողջականութիւնը» հարգելու պահանջին ի պատասխան: Նման պահանջ, ինչպէս հայտնի է, դնում է ոչ միայն Ադրբեյջանը, այդպիսին է նաև այն միջազգային կազմակերպութիւնների դիրքորոշումը, որոնք այս միջէթնիկական խնդրի լուծման գործում հանդես են գալիս որպէս միջնորդներ:

Ա. Զիջումների սպասվող հոգեբանական հետևանքները

Տարածքային հարցում զիջումներ կատարելը հանգեցնելու է մի շարք խիստ անցանկալի հետևանքների, որոնցից մի քանիսը հետյալներն են.

1. Նման զիջումն ի չիք է դարձնում դարաբաղյան պատերազմի ընթացքում ձեռք բերված հաղթանակի դրական հետևանքների զգալի մասը, ցույց տալով, որ հայ ժողովրդի տված զոհերը իզուր էին: Դա կարող է մեր ժողովրդին ստիպել մտորելու, որ կռվելն ու արյուն թափելն իզուր են, քանի որ երկրի քաղաքական ղեկավարութիւնը չի կարողանում պահպանել արյան գնով ձեռք բերված արդար նվաճումները: Հասկանալի է, որ ժողովրդի մեջ նման մտայնութիւն առկայութիւնն ինքնին խիստ անցանկալի է և կարող

է վտանգ ներկայացնել ազգի ապագայի համար: Արդարացի ազատագրական պատերազմի միջոցով ձեռք բերված նվաճումները թշնամուն զիջելը, եթե դա վերջին հնարավորությունը չէ, եթե իրավիճակն անելանելի չէ՝ խիստ անցանկալի է և անթույլատրելի: Նման զիջումները հատուկ են թույլերին, պայքարելու կամք չունեցողներին, և ազգի մեջ էլ թույլի, անօգնականության ինքնագիտակցություն են ծնում: Հատկապես վտանգավոր է այն, որ զիջումները վերաբերում են բուն Հայկական տարածքներին, մեր հայրենիքի այն մասին, որտեղ մենք ապրել ու ձևավորվել ենք որպես ազգ, մշակույթ ենք ստեղծել դեռևս այն ժամանակ, երբ այժմյան հավակնողները՝ ազրբեջանցի թուրքերի նախնի ցեղերն աշխարհի այս կողմերի մասին պատկերացում անգամ չունեին:

2. Ազգային տարածքը, տվյալ դեպքում՝ Ազրբեջանի թուրքերից ազատագրված շրջանները, մեր ազգին պետք են ոչ միայն կենսագործունեության նվազագույն պայմաններ, ապագա և հեռանկար, այլև առողջ ինքնագիտակցություն ունենալու համար: Ազգային տարածքի հոգեբանական պատկերը ազգի հոգեկան կերտվածքի, նրա ինքնագիտակցության մի մասն է, նրա Մենք պատկերի անբաժանելի մասը: Էթնոսի ինքնագիտակցությունը չի սահմանափակվում լոկ նրա անդամների մարմիններով և հոգեկան ես-պատկերներով: Ազգային ինքնագիտակցության մեջ մտնում է նաև ազգային, էթնոգենետիկ տարածքի հոգեբանական պատկերը: Պոկեցիք այն ինքնագիտակցության կառուցվածքից, զիջեցիք այն օտարին՝ նշանակում է նվազեցրիք, աղքատացրիք ձեր ազգային ինքնագիտակցությունը, նվաստացրիք ինքներդ ձեզ:
3. Ազատագրված տարածքների զիջումը նաև նշանակում է արդարության սկզբունքի կոպիտ ոտնահարում: Նախորդ շրջանի, հատկապես մեր ժողովրդի XIX-XX դարերի պատմությունը արդեն հանգեցրել է այն խոր համոզմունքին, որ միջազգային քաղաքականության մեջ արդարություն չկա, հատկապես այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է փոքր ժողովուրդներին: Հայ ազգի նկատմամբ հատկապես անար-

դարացի է եղել միջազգային հանրությունը, և այժմ էլ նույն քաղաքականությունը շարունակվում է: Յուրաքանչյուր անհատի և յուրաքանչյուր ազգի համար արդարության հաղթանակի հույսը միանգամայն անհրաժեշտ է ապրելու և գործելու, ծայրահեղ հուսահատությունից զերծ մնալու համար: Մինչդեռ դարեր շարունակ կրկնվող անարդարությունները մեր ժողովրդի մեջ այն տեսակետն են ձևավորել, որ աշխարհն անարդար է, որ այլ ազգերից ու նրանց գործիչներից արդարություն սպասելն անօգուտ է, քանի որ նրանք ելնում են միայն իրենց եսասիրական շահերից: Անարդար աշխարհի մասին պատկերացումը խեղիչ ազդեցություն է գործում և՛ անհատների, և՛ ազգերի, հատկապես տուժածների, բայց նաև այդ անարդարությունից օգուտ ստացած ազգերի և նրանց առաջնորդների վրա: Մարդը և ազգերը հակված են ազրեսիային պատասխանելու ազրեսիայով, անարդարությունը՝ անարդարությամբ, հետևաբար, շարունակվող անարդարությունները հանգեցնում են մարդկության չարացմանն ու բարոյական է՛լ ավելի խոր անկմանը, քան եղել է մինչև այժմ: Սակայն, ինչպես ցույց են տալիս պատմությունն ու էթնոհոգեբանական ուսումնասիրությունները, անարդար աշխարհի մասին պատկերացումն ու նրա առաջ բերած չարացածությունը փոքր ժողովուրդների միջավայրում հիմնականում ներէթնիկական ուղղվածություն են ստանում: Ահա թե ինչու սպասվող զիջումների և դրանց հետ կապված ստորացումների հետևանքներից մեկը կարող է լինել ներազգային մթնոլորտի շիկացումը, տարբեր խմբերի և կուսակցությունների բախումները և ընդհանուր կրիմինալ վիճակի բարդացումը: Այս ամենը ձեռնտու է միայն մեր երկրի թշնամիներին:

Զիջումն ինքնին վտանգավոր երևույթ է, եթե արդարացված չէ: Ինչպես համոզիչ կերպով ցույց են տվել հոգեբանական հետազոտությունները, ամենից դժվարը և պատասխանատուն առաջին զիջումը կատարելն է: Հենց այստեղ պետք է կենտրոնացնել ուժերն ու դիմադրել ճնշմանը, որովհետև առաջին, թեկուզև փոքրիկ զիջումը, այդ վտանգավոր քայլը կատարողին ներքաշում է մի գործընթացի մեջ, որից դուրս գալն ու իրադարձությունների

ընթացքը շրջելն արդեն շատ դժվար, հաճախ նաև անհնարին գործ է: Առաջին գիջումը կատարելուց հետո գիջողական երկրորդ քայլը կատարելն ավելի հեշտ է դառնում. անձն ինքը, տվյալ դեպքում քաղաքական գործիչը կամ կառավարող խումբը, գիջման հետևանքով փոփոխություններ է կրում: Ամուր կամք և արդարացի ու կարծր դիրքորոշում ունեցող գործչի կամ խմբի փոխարեն այժմ մենք տեսնում ենք այնպիսին, որոնք չարդարացված գիջում են կատարել հակառակորդին և գիտակցում են այդ հանգամանքը (թեև կարող են նաև, հոգեբանական ինքնապաշտպանության դրդապատճառից ելնելով, արտամղել այն գիտակցությունից կամ փորձել նվազեցնել կատարված քայլի նշանակությունը): Զիջում կատարողն արդեն այն ուժեղ անձը, իշխանությունն սուբյեկտը չէ. նրանք, ում հաջողվել է կորզել այդ գիջումը, ներքուստ արդեն նրան թույլ ու վախկոտ են համարում, թեև կարող են հրապարակայնորեն գովաբանել: Այսպիսի խորամանկությունը հաճախ հասնում է իր նպատակին և գիջող գործչին հոգեբանորեն նախապատրաստում է հաջորդ գիջումը կատարելուն: Հակառակորդի քաղաքական քարոզչություն մեջ գիջում կատարողին կարող են որակել որպես ճկուն, իրատես, հմուտ և հեռատես քաղաքական գործչի: Բայց երբ թշնամին քեզ գովաբանում է, ուրեմն պետք է զգուշանաս և ըմբռնես, որ սխալներ ես թույլ տվել և գոնե հիմա պետք է սթափվես: Կրկնում ենք. առաջին գիջումը կատարելուց հետո հաջորդ գիջումներին գնալը հոգեբանորեն ավելի հեշտ է դառնում, երկրորդ գիջումը կատարելուց հետո երրորդն է՛լ ավելի է հեշտանում: Նույնիսկ գիջում կատարելու մասին բանավոր խոստում տալն արդեն առաջին գիջումն է և պարտավորեցնող, այն արդեն որոշ պատասխանատվություն է ստեղծում, և եթե հնարավոր է՝ նման խոստումներ տալուց նույնպես պետք է հրաժարվել (եթե դա չի կատարվում քաղաքական նպատակներով և ժամանակ չահելու միջոց, խորամանկ քայլ չէ): Եթե քաղաքական գործիչը, այն էլ ազգային պետություն դեկավարը, չհիմնավորված գիջումների է գնում, ապա կարող է հասնել այն բանին, որ երկար տարիների և մեծ ջանքերի գնով ձեռք բերված նվաճումները կարող է կարճ ժամանակահատվածում կորցնել:

Բ. Լկտիացում և կայսերական նկրտումներ

Ինչպես տեսանք, զիջումները, հատկապես երբ դրանք հիմնավորված չեն և չեն փոխհատուցվում հակառակորդի կողմից կատարվող հավասարազոր զիջումներով, վտանգավոր են և՛ կոնկրետ ազգային շահերի տեսանկյունից, և՛ զիջող կողմի առաջնորդների և մյուս էթնոկիրների հոգեվիճակի և ինքնագիտակցության համար: Հատկապես վտանգավոր են չհիմնավորված զիջումները, իսկ դարաբաղյան հարցում հայկական կողմի ամեն մի շոշափելի զիջում հենց այդպիսին է՝ անարդարացի և վտանգավոր հետևանքներով հղի: Բացի այդ, նման զիջումները կարող են դիտվել նաև որպես դավաճանական գործողություններ, հատկապես, եթե գոյություն ունեն այլ հնարավորություններ, ազգային շահերը պաշտպանելու և երկրի անվտանգությունն ապահովելու այլ ուղիներ: Այլընտրանքի բացակայությունը հազվադեպ հանդիպող վիճակ է:

Սակայն շատ էական է նաև այն, թե միակողմանի այդ զիջումներն ինչպիսի՞ փոփոխություններ են առաջ բերում հակառակորդի հոգեվիճակում, միջէթնիկական դիրքորոշումներում և ինքնագիտակցության մեջ: Յուրաքանչյուր ոք հասկանում է, թե ինչ բան է լկտիությունը, և որ մարդուն կարելի է լկտի համարել: Այդպիսին է այն մարդը, ով եսասեր է, ագրեսիվ, արհամարհում է ուրիշների շահերը, ամոթ չունի և կարծում է, թե ուրիշի սեփականությունն իրեն է պատկանում: Այդպիսի մարդը որևէ մեկին զիջումներ կատարելու պահանջ ներկայացնելուց և ստանալուց հետո ներկայացնում է նոր և ավելի մեծ պահանջներ: Եվ եթե նոր զիջում է կատարվում, ապա նրա հավակնությունների մակարդակն էլ ավելի է բարձրանում: Ամեն մի զիջում նա դիտում է որպես սեփական հաղթանակ և հակառակորդի պարտություն, իսկ պարտվածին նոր ու ավելի մեծ պահանջներ են ներկայացվում: Սա անհատի կամ խմբի լկտիացման գործընթացն է, որն, անկասկած, կարող է դիտվել մարդկային բոլոր փոխհարաբերություններում, այդ թվում նաև ազգերի փոխառնչությունների ընթացքում, հատկապես, եթե նրանց դիրքն ու հնարավորությունները տարբեր են կամ այդպես են ընկալվում: Հենց այդպիսի հետևանք, նման լկտիացում ենք մենք ակնկալում ադրբեջանցիների կողմից

այն դեպքում, եթե նրանց զիջումներ կատարվեն: Դիտվելու է և՛ նրանց ղեկավարների, և՛ ողջ ազգի հետագա լիտիացում, լիտիացման էսկալացիա: Դրա նշաններն այժմ արդեն կան: Զգալով, որ միջազգային կառույցների ճնշման ներքո հայկական կողմը զիջումներ կատարելու պատրաստակամության նշաններ է դրսևորում, հակառակորդ ղեկավարությունն արդեն լիտիացման մասին վկայող քայլեր է կատարում: Դրանցից առնվազն երկուսն ակնհայտ են: Առաջինը Նախիջևանի հայկական մարզի մշակութային արժեքների վերջնական ոչնչացումն է, մասնավորապես մեր 10000-ից ավելի խաչքարերի ոչնչացումը բանակային զորամասերի ուժերով: Երկրորդը՝ Իլհամ Ալիևի հանձնարարությունն է երկրի գիտությունների ակադեմիային՝ ապացուցելու, թե իբր հայերը Արցախում եկվորներ են: Այս փաստերն արդեն պետք է հայկական կողմի համար լուրջ նախազգուշացում հանդիսանան: Ազդեբեջանցիների և թուրքերի նպատակը հայերի և հայկական մշակույթի վերջնական ոչնչացումն է: Մենք գիտենք, որ Նախիջևանը հայ էթնոսի և նրա մշակույթի ձևավորման հիմնական օջախներից մեկն է, մինչդեռ թուրք գավթիչները ձգտում են այստեղ ոչնչացնել հայկականության հետքն անգամ: Ինչպես և նախկինում, մենք տեսնում ենք բացառապես միջազգային անտարբեր վկաների և հանցակիցների: Փոքրաթիվ ազնիվ գործիչների միջամտությունը որևէ արդյունքի չի հանգեցնում: Հանցագործների ձեռքը բռնող չկա:

Խոսելով զիջումների քաղաքականության հետևանքների մասին, չի կարելի մոռանալ ևս մեկ հանգամանք: Երբ որևէ ազգ հպատակեցնում է մեկ ուրիշ ազգի և նրա տարածքը՝ իր գերիշխանությունը հաստատելով նրանց վրա, ապա ստեղծվում է երկէթնիկ կամ բազմէթնիկ հասարակություն և պետություն, որի մեջ ասպարեզ են գալիս տիրողներ և ենթակա էթնոսներ: Սա կայսրության (իմպերիա) ամենաբնորոշ գիծն է: Եթե միջազգային միջնորդները պնդում են, թե Արցախը պետք է մնա Ազդեբեջանի կազմում, ապա հարց է ծագում. իսկ ինչո՞ւ պետք է այդ երկիրը կայսրություն լինի: Ինչո՞ւ պետք է հայ ազգի մի մասն ընկնի ազդեբեջանցիների գերիշխանության տակ: Ինչո՞ւ է ենթադրվում, թե թուրքերն այս աշխարհում ինչ-որ հատուկ իրավունքներ ունեն, մինչդեռ հայերն այդ իրավունքից զուրկ են: Ինչո՞ւ են որոշ

ազգերի առաջնորդներ իրենց նման աստվածային իրավունքներ վերագրում: Սա շատ կարևոր էթնոհոգեբանական և էթնոքաղաքական խնդիր է, որը հատուկ ձևակերպումով պետք է դրվի բանակցությունների սեղանին: Կայսերական (կամ կայսերապաշտական) ինքնագիտակցությունը նորանոր նվաճումներ ու զոհեր է պահանջում: Արդեն այժմ ադրբեջանական ցեղը նկրտումներ ունի գրավել ամբողջ Հայաստանը, Վրաստանի որոշ մարզեր, ընդհանուր սահման ունենալ Թուրքիայի հետ և իր այդ բնական դաշնակցի հետ միասին իրագործել իրենց պանթյուրքական նպատակները: Այս ամենը նկատի ունենալով մենք չենք կարող Արևմուտքի քրիստոնեական երկրների, այդ թվում նաև Ռուսաստանի քաղաքականությունն այլ կերպ որակել, քան անհեռանկարային, կարճամիտ և վախկոտ: Այն ելնում է լուկ իրենց այժմյան նյութական շահերից (նավթ, գազ), պատեհապաշտ է և, ըստ էություն, հեռու է համամարդկային արժեքների պաշտպանությունից: Ես արդեն չեմ խոսում այն մասին, որ թուրքերի կողմից ստրկացված ժողովուրդների բախտը վերին աստիճանի ողբերգական է եղել և այդպիսին է լինելու նաև ապագայում: Հայերի, հույների, ասորիների և այլ ազգերի ոչնչացումը Օսմանյան կայսրություն և թուրքական հանրապետության մեջ, հայություն կոտորածները Շուշիում, Բաքվում, Սումգայիթում և Ադրբեջանի այլ բնակավայրերում XX դարի 80-90-ական թվականներին, որևէ կասկած չեն թողնում այն մասին, թե ինչ ճակատագիր է սպասվում հայերին, եթե ԼՂՀ-ն և հայկական մյուս տարածքները մնան Ադրբեջանի կազմում: Բայց նույնիսկ այն դեպքում, եթե հայերի կյանքի ապահովության միանգամայն հուսալի թվացող միջազգային երաշխիքներ ստեղծվեն (որը ես անհնարին եմ համարում), ապա ինքնին հայկական համայնքը թուրքերից կախման մեջ դնելու փորձն իսկ վիրավորական է, վարկաբեկիչ և անընդունելի, դա կարող է հանգեցնել մեր էթնիկական ինքնագիտակցության քայքայման: Այն, որ ադրբեջանցիների համար դա ցանկալի է՝ կասկած չի հարուցում: Ինչո՞ւ են ցանկանում մեզ նման վիճակի մեջ դնել նաև եվրոպացի և ամերիկացի «ժողովրդավարները»: Այս հարցը ևս կրկին և ամենայն վճռականություն պետք է դնել այդ գործիչների առջև:

3. Ո՞րն է պետք միջէթնիկական կոնֆլիկտի պահպանումը

Ղարաբաղյան կոնֆլիկտի լուծման միակ ճիշտ ուղին հետևյալն է. ա) ԼՂՀ-ի կազմի մեջ մտցնել նաև թուրքական օկուպացիայից ազատագրված տարածքները, բ) ԼՂՀ-ի կազմի մեջ ներառել նաև նրանից խլված Գետաշենի և դաշտային Ղարաբաղի մյուս շրջանները, գ) Հայ և ադրբեջանական էթնոսները լիովին առանձնացնել, մեկուսացնել միմյանցից և թույլ տալ, որ պեսզի ձևավորվեն զուտ ազգային պետություններ: Վերջապես, պետք է հասկանալ, որ այդ ժողովուրդները միասին, մեկ պետության մեջ ապրել չեն կարող:

Ի՞նչ հետևանքների կարող է հանգեցնել ադրբեջանցիների վերադարձը հայերի կողմից ազատագրված տարածքներ՝ ԼՂՀ-ի այժմյան տարածք: Հետևանքները կարելի է կանխատեսել. միջէթնիկական կոնֆլիկտի մշտական օջախի վերականգնում, նոր բախումներ և արյունահեղություն: Եվ եթե նման պայմաններում Հայաստանը միջամտելու հնարավորություն չունենա, ապա օգտվելով իրենց թվական գերակշռությունից և բնական աճի բարձր տեմպերից, արդեն կարճ ժամանակ անց ադրբեջանցիներն արտամղելու կամ ոչնչացնելու են հայկական էթնոսը, ոչնչացնելու են նրա ինքնավարությունն ու հանգեցնելու են միաէթնիկ պետության ստեղծման: Դա նույնն է, ինչի ձգտել է Թուրքիայի ղեկավարությունը՝ հանցագործությունների միջոցով փորձելով մոտենալ այդ նպատակին:

Մի՞թե միջազգային միջնորդներն ու նրանց թիկունքում կանգնած մեծ տերություններն այս ամենը չեն կարողանում կանխատեսել: Կարծում եմ, որ ոչ միայն կարող են կանխատեսել (թեև բացառված չէ նաև էթնոհոգեբանության օրինաչափություններին անտեղյակ լինելը), այլև դա հենց այն է, ինչ նրանք ցանկանում են: Միջէթնիկական կոնֆլիկտի օջախի պահպանումը նրանց թույլ է տալիս միջամտել տարածաշրջանի երկրների ներքին գործերին, հսկողության տակ պահել այդ տարածքը՝ իրագործելու համար իրենց հեռագնա ռազմավարական նպատակները: Զիջել, ընդառաջ գնալ նրանց պահանջներին՝ նշանակում է կամ գնալ դեպի ոչնչացում, կամ, լավագույն դեպքում, դեպի կախյալ ու

խղճուկ գոյություն՝ առանց հզորացման և իրական անկախության հեռանկարի:

Հայ քաղաքական գործիչներից պահանջվում է սթափ գնահատել թշնամու մոտակա և հեռահար նպատակները, երկրի ներսում միավորվել և հզոր բռունցք դառնալ, միավորել ողջ հայության ուժերը, որդեգրել ավելի կոշտ և ինքնուրույն քաղաքականություն: Ենթադրել, թե թուրքերը քաղաքակրթվել ու փոխվել, մարդկայնացել են, վստահել նրանց խոսքին ու նույնիսկ գրավոր պայմանագրերին՝ նշանակում է հանդես բերել ծայրահեղ միամտություն, ազգագիտության և ազգային հոգեբանության բնագավառներում՝ տգիտություն, ինչպես նաև անպատասխանատվություն սեփական ժողովրդի ճակատագրի հանդեպ: ԼՂՀ-ին «ինքնավարության բարձր մակարդակ» խոստանալու հետ միասին, Ադրբեյջանի ղեկավարությունը հանձնարարում է իր գիտնականներին հիմնավորել մտացածին այն դրույթը, թե իբր Արցախը հայկական էթնիկական տարածք է, կարգադրում է ոչնչացնել իրենց կողմից օկուպացված տարածքներում հայկական մշակութային արժեքները, և դեռ ենթադրվում է, որ նման լկտի ծրագրերի իրագործման պայմաններում մենք պետք է բանակցութուններ վարենք և նոր զիջումներ կատարենք: Այս կործանարար ուղին ոտք դնել չի կարելի:

20-22 հունվարի 2006 թ.